ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԱՐՇԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի, համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ)

Այս հոդվածում մենք քննարկում ենք հայրենասիրական դաստիարակության արդի խնդիրները հայոց պատմության դասընթացում՝ հայկական մշակույթի բաժինների դասավանդման համատեքստում: Վերլուծելով «հայրենասիրություն» հասկացության պատմական զարգացման ուղին և տարբեր դրսևորումները, առաջ ենք քաշում հասարակական բնագավառներում հայրենասիրության և հայրենասիրական դաստիարակության առավել լայն ընդգրկում, այլ ոչ թե միայն ռազմահայրենասիրական ուղղվածության ընկալում: Մասնավորապես՝ ընտանիքի, աշխատանքի, առողջ սերընդափոխության ապահովման, սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցման, ազնիվ և նվիրյալ աշխատանքով հայրենիքին և ժողովրդին ծառայելու, հասարակական տարբեր շերտերի ներկայացուցիչների, մանուկների և ծերերի հանդեպ հարգանքի և հոգատարության, սահմանափակ կարողություններով մարդկանց հանդեպ ոչ դիսկրիմինացիոն վերաբերմունքի և զիջողականության վարքագծի դրսևորումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. հայկական մշակույթ, հայրենասիրական զգացմունքներ, սոցիալիստական հայրենասիրություն, սովետական հայրենասիրություն, ժողովրդական հայրենասիրություն, ռազմահայրենասիրական ուղղվածություն, հայրենասիրական դաստիարակություն:

1991 թ.-ի սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության հռչակագրով տրվեց Հայաստանի՝ միջազգային իրավահարաբերություններում որպես անկախ պետականության զարգացման փուլի մեկնարկը: Նոր նախապայմաններ ստեղծվեցին հասարակական-քաղաքական, մշակութային, կրթական, գիտական կյանքի զարգացման համար: Սոցիալ-տնտեսական, քաղաքական, ռազմական ծանր պայմաններում հայ ժողովուրդը չկորցրեց իր ազգային դիմագիծը և ազգային ինքնագիտակցությունը՝ լծվելով նորաստեղծ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մի շարք մարտահրավերների հաղթահարման գործին: Պետականաշինության այս ծանր և մեկնարկային փուլում, Արցախյան պատերազմի պայմաններում հայ ժողովուրդը դրսևորեց կուռ միասնականություն և անկոտրուն կամք, որը խորը գիտակցական՝ ազգային արժեքային համակարգի վրա հիմնված, բազմադարյան պատմական փորձից եկող հայրենասիրական բարձր զգացմունք-

ների դրսևորում էր:

Հայրենասիրական զգացմունքների այդ բուռն պոռթկումն էր, որ հանգեցրեց Արցախյան պատերազմում հայկական կողմի հաղթանակին: Հայրենասիրության սերմանման գործում պատմական հոլովույթում կարևորագույն նշանակություն է ունեցել հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի, պատմական թեմաներով ստեղծագործությունների և դրանց հիման վրա պատմության դասավանդման իրականացումը, որն էլ ցանկացած հասարակության՝ հավաքական, գիտակցական կենսագործունեության ապահովման առհավատչյան է: Հայրենասիրությունն արտահայտվում է սեփական հայրենիքի հանդեպ սիրո և անձնական ու խմբային շահերը հայրենիքի շահերին ծառայեցնելու, նրան հավատարիմ ծառայելու ու պաշտպանելու պատրաստակամության մեջ [11, էջ 264]:

Դաստիարակության գործընթացում մշտապես կարևորվել է անձնային որակների ձևավորման տեսանկյունից հայրենասիրության սերմանումը, անհատի՝ որպես հասարակական անձի քաղաքացի ձևավորելու գործում: Այս, առումով անհրաժեշտություն է ներկայացնում հայկական մշակույթի բաժինների դասավանդման համատեքստում հայրենասիրական դաստիարակության խնդիրներին անդրադառնալը:

Հայրենասիրական դաստիարակության խնդիրները մշտապես քննարկվել են մանկավարժա-մեթոդական գրականության մեջ: Խորհրդային հեղինակների մոտ գերիշխում է խորհրդային կամ սոցիալիստական հայրենասիրության, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո, և մանավանդ 21-րդ դարում լույս տեսած գրականության մեջ շեշտադրվում է ժողովրդական հայրենասիրությունը՝ հիմնված ազգային արժեքային համակարգի վրա:

ԽՍՀՄ վաստակաշատ մեթոդիստ Պ. Լեյբենգրուբն, անդրադառնալով խորհրդային հայրենասիրության խնդիրներին, առանձնացնում է երիտասարդ սերնդին խորհրդային հայրենասիրության, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության, աշխատավորական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու խնդիրները: Որպես խորհրդային հայրենասիրական դաստիարակության նպատակներ Պ. Լեյբենգրուբը շեշտադրում է.

1. Աշակերտներին հասանելի խորությամբ ձևավորել վերը նշված հասկացությունների իմաստային ընկալումը՝ որպես Մարքս-Լենինյան աշխարհայացքի և կոմունիստական բարոյականության անբաժանելի գծեր,

2. Դրանց հիման վրա խթանել խորհրդային հայրենասիրական զգացմունքների, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության, աշխատավորական-ինտերնացիոնալիզմի զարգացումն ու ձևավորումը,

3. Դաստիարակել հայրենասեր և ինտերնացիոնալիստ անձ՝ դպրոցում, աշխատանքային և հասարակական կյանքում, ով պատրաստ կլինի պաշտպանել սոցիալիստական հայրենիքը:

Հատկանշական է այն, որ հեղինակը առաջարկում է բարձր դասարաններում ուշադրություն դարձնել կոմունիստական բարոյականության և դիալեկտիկական մատերիալիստական աշխարհայացքի գիտական բացահայտմանը: Անդրադառնալով ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկություններին՝ Պ. Լեյբենգրուբը նշում է. «...բարձր դասարանների աշակերտների վարքագիծը հիմնականում բնորոշվում է իրենց բարոյական ըմբռնումներով, կյանքի հանդեպ ունեցած հայացքների համակարգով» [10, էջ 249]:

Հետխորհրդային հեղինակներից Ա. Ստեպանիշևը, անդրադառնալով հայրենասիրական դաստիարակությանը, արժևորում է սովորողների կողմից հայրենասիրական զգացմունքների ձևավորման ընթացքում ռուս ժողովրդի ավանդույթների, հերոսական պայքարի, հերոսությունների, տաղանդների ու լավագույն զավակների ունեցած բարո-

յական որակների մասին գիտելիքների գիտակցված ընկալումը, ինչպես նաև՝ սերը պետական խորհրդանիշների, ու անհանդուրժողականությունը պետության թշնամիների և բարի կամք չդրսևորողների հանդեպ [12, էջ 92]:

Աշակերտներին անցյալի հերոսներին ծանոթացնելիս Ա. Ստեպանիշևը անհրաժեշտ է համարում հարցադրումն այն մասին, թե ինչու հեռավոր նախնիները պատրաստ էին զոհաբերել իրենց ունեցվածքը, սերը և կյանքը հանուն հայրենիքի բարօրության [12, էջ 92]:

Հարկ է նշել, որ Ա. Ստեպանիշևի մոտ հայրենասիրական դաստիարակության խնդիրներում գերակայում է ռազմահայրենասիրական ուղղվածությունը:

Մեր խորին համոզմամբ հայրենասիրությունը առավել լայն հասարակական բնագավառների ընդգրկում ունի. մասնավորապես՝ ընտանիքի, աշխատանքի, առողջ սերընդափոխության ապահովման, սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցման, ազնիվ և նվիրյալ աշխատանքով հայրենիքին և ժողովրդին ծառայելու, հասարակական տարբեր շերտերի ներկայացուցիչների, մանուկների և ծերերի հանդեպ հարգանքի և հոգատարության, սահմանափակ կարողություններով մարդկանց հանդեպ ոչ դիսկրիմինացիոն վերաբերմունքի և զիջողականության վարքագծի դրսևորումները: Դրանք բնագավառներ են, որոնք ուղղակիորեն պայմանավորում են մարդու՝ հայրենիքի հանդեպ տածած սիրո անկեղծ լինելը:

Անդրադառնալով պատմության դասավանդման ընթացքում դաստիարակչական խնդիրների լուծմանը՝ Հ. Ղևոնդյանը նշում է. «Ազգային և համազգայինի ճիշտ ընկալումը կնպաստի ոչ միայն աշխարհայացքի ձևավորմանը, այլ նաև հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված գիտակից անհատի ու քաղաքացու ձևավորմանը» [4, էջ 163]:

Ինչ վերաբերում է հայրենասիրություն հասկացության խնդրին, ապա հարկ է նշել, որ պատրիոտիզմը (հունարենից թարգմանաբար՝ հայրենիք) սոցիալ-քաղաքական և բարոյական սկզբունք է, որը ունեցել է իր պատմական յուրօրինակ զարգացումը:

Հայրենասիրությունը ծագման օրվանից նպաստում էր մարդկանց գոյությանը՝ դրսևորվելով որպես հարմարվողականության որակ: Յուրայինների և օտարականների բաժանումը առհավատչյան էր՝ նախնադարյան համայնքում կամ ցեղում միասնականության ապահովման և ներքին ընդհարումների բացառման:

Նախնադարյան տոհմա-ցեղային միավորների՝ տարածքային, տնտեսական, լեզվական, ազգակցական միասնությունը խորհրդանշող պաշտամունքային ծեսերը, նույնաբնույթ հավատալիքների նախասկզբնական ձևերը, մասնավորապես հայրիշխանական տոհմերի ձևավորմանը զուգահեռ՝ տոհմի կամ ցեղի մեջ աստիճանաբար զարգանում էին հայրենասիրության նախնական պատկերացումներ:

Մարդկության պատմության նույնիսկ այդ վաղ շրջանում յուրայինների և օտարների բաժանումը կանխորոշեց էվոլիուցիայի դինամիկան, որը նպաստեց հասարակության զարգացման արագացմանը՝ դուրս բերելով էվոլուցիոն զարգացումը կենսաբանական մակարդակից:

Անդրադառնալով ազգի միասնության դրսևորումներին՝ Լ. Շանթը նշում է. «Բնականաբար ամենէն առաջ ծագումը, արեան կապը, նոյն նախահայրերէն առաջացած ըլլալը, ցեղը: Ընտանիքն ու ազգակցութիւնը ամենէն նախնական ու բնական կապն է մարդոց մէջ: Եւ իրենց ծագումը մէկ աղբիւրէ մը ըլլալու միտքը այն աստիճան հարազատ ու անհրաժեշտ է եղած հետզհետէ գիտակցութեան եկող ժողովուրդներուն, որ ամեն մէկը իր ինքնութիւնը և իր մասերու փոխադարձ կապը բացատրելու համար

ստեղծեր է, բանաստեղծեր է իրեն համար նախահայր մը, տալով անոր նոյն ժողովուրդին անունը և նոյն ժողովրդի հոգիին համապատասխան հերոսական գործեր» [6, էջ 11]: Այսպես հայ ժողովուրդն իր անվանումը ստացել է Հայկ նահապետից, ով ըստ նախաքրիստոնեական ավանդազրույցի արարչագործ Հայ (ա) աստծո որդին էր: Դարեր ի վեր հայ ժողովուրդը սերունդների մեջ հայրենասիրական զգացմունքներ է ձևավորել Հայկի հերոսական կերպարով և նրա՝ ու իր սերունդների կատարած սխրագործությունների մասին առասպելների և ավանդազրույցների միջոցով:

Պետականության հանդես գալու հետ մեկտեղ հայրենասիրության ֆենոմենը ավելի է բարդանում, քանի որ առաջանում է պետական իշխանության և ժողովրդի հարաբերակցության խնդիրը:

Պետականության առաջացման հետ մեկտեղ հայրենասիրությունը բաժանվում է երկու տեսակի, այն է՝ պետական հայրենասիրություն (հայրենասիրություն վերևից) և ժողովրդական հայրենասիրություն (հայրենասիրություն ներքևից), պետականությունը մշտապես ձգտել է հայրենասիրությունն օգտագործել իր շահերի համատեքստում: Խաղաղ ժամանակներում պետությունը ամեն կերպ, հայրենասիրությունը փորձել է սահմանափակել տնտեսական և կենցաղային ոլորտներով՝ բացառելով դրա օգտագործումը քաղաքական համատեքստում [13, էջ130]:

Պատմությունից կան մի շարք հասարակարգերի օրինակներ, որոնց մեջ ցանկացած մտահոգություն՝ պետության այս կամ այն մշակութային, հասարակական, տնտեսական խնդիրների վեր հանում և մատնանշում, դիտարկվել է որպես այլախոհություն, հակահայրենասիրություն, ընդհուպ մինչև պետական դավաճանություն, այլ ոչ թե հայրենիքի հանդեպ սիրո դրսևորում կամ սրտացավ մոտեցում հարազատ երկրի նկատմամբ: Այս երևույթը հատկապես բնորոշ է եղել՝ բացարձակ միապետություններին, կայսրություններին, ամբողջատիրական հասարակարգերին և այլն:

Այս համատեքստում հարկ է նշել, որ «այլախոհների» փնտրտուքը հատկապես ուժգին է եղել ԽՍՀՄ ամբողջատիրական (տոտալիտար) համակարգի ժամանակաշրջանում, մասնավորապես՝ Ի. Ստալինի կառավարման տարիներին:

Պատերազմական ժամանակաշրջանում պետությունը հայրենասիրությունն օգտագործում է թշնամու հանդեպ հաղթանակի հասնելու նպատակով: Պատահական չէ, որ ավելի քան 200 տարի առաջ Ֆրանսիայում պատրիոտ էին կոչում այն քաղաքացիներին, ովքեր պայքարում էին ավստրո-պրուսական ինտերվենտների դեմ, իսկ Իսպանիայում այն օգտագործվել է «Հայրենիք կամ մահ» (patria o muerte) իմաստով [12, էջ 91]:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ին, ապա Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց (1941 թ.-ի հունիսի 22) հետո իշխող օղակներում տեղի ունեցան մի շարք փոփոխություններ հայրենասիրության ընկալման տեսանկյունից:

Ժողովրդին ուղղված իր առաջին ուղերձում Ստալինը ապավինում է, ոչ թե այսպես կոչված սոցիալիստական, այլ տրադիցիոն ժողովրդական հայրենասիրությանը՝ փորձելով ներգործել և բարձրացնել ժողովրդի հայրենասիրական զգացմունքները:

1943թ.-ի նոյեմբերին ԽՍՀՄ կառավարության կողմից եկեղեցիների վերաբացման կարգի ընդունումը, խորհրդային միությունում դեռևս պատերազմի սկզբից դիտվող՝ հանրապետությունների հոգևոր կյանքի վերականգնումը ևս փաստում են, որ պատերազմական շրջանում ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինը առաջնային էր համարում ազգային խորը գիտակցական արժեհամակարգի վրա հիմնված ժողովրդական հայրենասիրության դերը՝ որպես հաղթանակի հասնելու գրա-

վական: Ամենևին պատահական չէ, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ Ստալինգրադի ճակատամարտում, Գերմանիայի հաղթանակի դեպքում, հարևան Թուրքիան սպառնում էր Անդրկովկաս ներխուժմամբ, Դ. Դեմիրճյանը 1943 թ.-ին կերտեց Վարդանանց պատերազմին նվիրված իր պատմավեպը, իսկ Հ. Բեկնազարյանը նույն թվականին նկարահանեց «Դավիթ Բեկ» գեղարվեստական ֆիլմը:

Ժողովրդական հայրենասիրության գերակա լինելու հետ կապված Ա. Շեմյակինսկին ընդգծում է. «Ռուսական կայսրության և ԽՍՀՄ-ի ողջ պատմությունը վկայում են ժողովրդական հայրենասիրության գերակայությունը պետական և սոցիալիստական հայրենասիրության նկատմամբ» [13, էջ 131]:

Հարկ է նշել, որ ժողովրդական հայրենասիրությունը հսկայական դերակատարություն ունեցավ, ինչպես Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի հասնելու, այնպես էլ ԽՍՀՄ միութենական հանրապետությունների ազգային մշակույթների զարգացման գործում, նույնիսկ բռնաճնշումների ժամանակաշրջանում:

Այսպիսով՝ նույնիսկ խորհրդային ամբողջատիրական, և հատկապես Ստալինյան ժամանակաշրջանում ժողովրդական հայրենասիրությունը (ներքևից՝ հիմնված ազգային մշակույթի, արժեքային համակարգի վրա) գերիշխող էր սոցիալիստական կամ սովետական հայրենասիրության նկատմամբ: Ինչ վերաբերում է սոցիալիստական և սովետական հայրենասիրություն հասկացությունների հարաբերակցության և սահմանումների խնդիրներին, ապա հարկ է նշել, որ, մեր կարծիքով, սոցիալիստական հայրենասիրության մասին խոսելիս պետք է ընդգծել դրա պրոլետարական-ինտերնացիոնալիզմի կոնտեքստում ըմբռնումը, իսկ սովետական հայրենասիրության մասին խոսելիս պետք է շեշտադրել ԽՍՀՄ՝ որպես պետություն և նրա՝ որպես ընդհանրական հայրենիքի, միութենական հանրապետությունների միության խորհրդային արժեքների հանդեպ տածած սիրո և պարտքի զգացողության ընկալումը:

Այսպիսով՝ Խորհրդային հասարակության մեջ մշտապես պահպանվել են ազգային արժեքներն ու զգացմունքները: Ինչ վերաբերում է սոցիալիստական և ժողովրդական՝ այս դեպքում հայ ժողովրդի դարերի խորքից եկող հայրենասիրական զգացմունքի միջև կապի խնդրին, ապա հարկ է նշել, որ մենք ընդհանուր առմամբ ընդունելի ենք համարում Ա. Շեմյակինսկու վերը նշված տեսակետը և մասնավորապես, ՀԽՍՀ-ի վրա տեղայնացնելով վերջինիս բովանդակությունը, համադրելով մի շարք մշակութային իրողությունների, դարակազմիկ իրադարձությունների հետ, ընդգծում ենք, որ ՀԽՍՀ-ում ևս ժողովրդական հայրենասիրությունը, ոչ միայն գերիշխող է եղել սոցիալիստական կամ սովետական (այսինքն՝ պետական, պաշտոնական) հայրենասիրության նկատմամբ (ինչպես առանձին անհատների, այնպես էլ հայ հասարակության լայն շերտերի համար), այլ նաև հանդիսացել է Հայաստանում այդ շրջանում տեղի ունեցած ողջ տնտեսական, քաղաքական, մշակութային առաջընթացի շարժիչ ուժ:

Այդ առաջընթացի գագաթնակետը հանդիսացավ 1960-ական թվականների հայ ազգային զարթոնքը, երբ նախապատրաստվեց և համազգային մակարդակով նշվեց Հայոց մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը (1965թ.): Այս առումով Հայոց ցեղասպանության ամենամյա տարելիցը նշելու սովորույթի ձևավորումը կարելի է համարել 1960-ական թվականների հայ համազգային զարթոնքի գագաթնակետ [5, էջ 68]:

Այսպիսով՝ բուն ազգային արժեքների վրա հենված ժողովրդական հայրենասիրությունը վեր է ցանկացած պետության, քաղաքական այս կամ այն գաղափարախոսության կողմից ուղղորդված

հայրենասիրության պատկերացումից:

Ինչպես նշում է Մ. Սալտիկով-Շեդրինը. «Չպետք է շփոթել հայրենիքը Ձերդ գերազանցության հետ» [13, էջ 131]: Այս խոսքերը արդիական են նաև այսօրվա ժողովրդավարական հասարակության պայմաններում: Իրական հայրենասիրությունը պետք է սերմանել միայն հենվելով ազգային արժեքների վրա, այլ ոչ թե այս կամ այն քաղաքական գաղափարախոսության, քանի որ դրանք երբեմն կարող են վերաճել նացիզմի, ֆաշիզմի կամ այլ շովինիստական դրսևորումների, որոնք Ա. Շվեյցերը բնորոշում է՝ որպես հիստերիայի և ստալինիզմի իրավիճակում գտնվող ազգայնականություն [13, էջ 131]:

Կեղծ հայրենասիրության բացասական դրսևորումներից է նաև այսպես կոչված «Կվասային հայրենասիրությունը»[1], որը ևս իր մեջ պարունակում է շովինիզմի տարրեր, և այն հատուկ է ներքևից՝ հասարակական որոշ շերտերից ձևավորվելու և զարգանալու: Ռուս իրականության մեջ այն անվանվել է կվասային հայրենասիրություն և առաջիններից մեկը այն օգտագործել է Ա.Ն. Մուխանովը 1832թ.-ի հուլիսին («Օրագիր» ամսագրում) [8, էջ 52]:

Կվասային հայրենասիրությունը հենվում է ավանդական կենցաղային ձևերի պահպանման, դրա՝ որպես անվիճելի արժեքների դիտարկման վրա, և բացարձակ արժեքներ են դիտարկվում ավանդական տարազը, ազգային սովորույթները և այլն:

Հայաստանում ևս առկա են «կվասային հայրենասիրության» դրսևորումներ, որը հայաստանյան արդի իրականության մեջ առավել հայտնի է «Բաժակաճառային հայրենասիրություն» անվանմամբ: Այն ուղեկցվում է անցյալում և ներկայում տեղի ունեցած իրադարձությունների ուռճացման, պատմական փաստերի չափազանցումներով Հայաստանի և հայ ժողովրդի՝ այլ ազգերի նկատմամբ գերադասումով, դրական երևույթները գովաբանելով, իսկ թերություններն ու բացթողումներն անտեսելով:

Հայրենասիրության ըմբռնման տեսանկյունից հետաքրքրական է, որ հասարակական շրջանակների մեծ մասը հիմք է ընդունում ոչ թե հայրենիքի դրամատիկ ներկան կամ լուսավոր ապագան, այլ պատմական անցյալը, հզոր նախնիների հերոսագործությունները և փառավոր իրադարձությունները:

Մեր խորին համոզմամբ՝ պատմական անցյալից միայն դրականի գովերգումը հանգեցնում է պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած սխալների և դրանց հիման վրա կուտակված փորձի կիրառման և ապագայում դրանք չկրկնելու հարցի անտեսմանը: Այսինքն՝ պատմական անցյալում տեղի ունեցած բացթողումներն ու սխալները խիստ անհրաժեշտություն են ներկայացնում այսօրվա և ապագա սերունդների համար դասեր առնելու և խուսափելու դրանց կրկնություններից:

Հայ ժողովուրդը դարեր ի վեր սերունդների մեջ (բանավոր, ապա նաև գրավոր) հայրենասիրություն է սերմանել հայ ժողովրդի վառ հերոսական հավաքական կերպարների միջոցով, որոնք ազգային արժեքների վրա հենված, խորը գիտակցական հավաքականությունը խորհրդանշող՝ ժողովրդական հայրենասիրության ցանկացած պետական պաշտոնական (վերևից) հայրենասիրության նկատմամբ գերակայության առհավատչյան են: Սա հիմնականում պայմանավորված է եղել պետականու-

1 Ծնթ.՝ Կվասը, հին ժամանակներից լայն տարածում ունենալով ռուս հասարակության մեջ և համարվելով ժողովրդական ըմպելիք, 19-րդ դարում ազնվականաև և ինտելիգենցիայի շրջանում, որտեղ նորաձև էին արևմտյան սովորույթները գրեթե ռեակցիոն էր համարվում: Ազնվականների և ինտելիգենցիայի կվասը փոխարինվել էր գարեջրով, իսկ կանանց շրջանում լիմոնադով, որն էլ հանդիպեց պահպանողականների և ավանդապաշտների դիմադրությանը: Այսպես կվասը դարձավ «հայրենասիրության» սիմվոլ և խորհրդանշեց «արմատական իսկական հայրենասիրությունը»:

թյան բացակայության, հարկադրված արտագաղթով և օտար նվաճողների տիրապետությունների հաստատման գործոններով: Այսպիսի ժողովրդական հայրենասիրության դրսևորում է «Սասունցի Դավիթ» էպոսը, որն իր 4 ճյուղերով ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական պայքարը և ստեղծագործ բնույթը: Անդրադառնալով «Սասունցի Դավիթ» էպոսի 4 ճյուղերին Հ. Օրբելին նշում է, որ ամբողջ դյուցազնաշրջանի չորս սերնդի հերոսներից Դավթի կերպարը առավել մոտ և հարազատ է ժողովրդի սրտին. «...նրա հիշողության մեջ առավել փայփայված, առավել երկրային, ամենից ավելի ժողովրդական» [7, էջ 4]:

Հայ ժողովրդի հայրենասիրական զգացմունքների դրսևորումն է նաև պատմիչ Փավստոս Բուզանդի միջոցով մեզ հասած Արշակ Երկրորդի և պարսից Շապուհ արքայի միջև բանակցությունների շուրջ հյուսված ժողովրդական ավանդազրույցը: 368թ.-ին Արշակ Երկրորդը իր սպարապետ Վասակ Մամիկոնյանի հետ միասին մեկնում է Պարսկաստան, որտեղ Շապուհը պահանջում է իր սենյակի մի մասում շաղ տալ Հայաստանից տարված հող և ջուր ցանել վրան և, երբ Արշակը պարսկական հողի վրա էր, զղջում էր երդմնադրուժ լինելու, պատերազմելու համար և ընդունում պարսից Շապուհի գերակայությունը, իսկ երբ ճեմում էր հայկական հողի վրա, ըմբոստանում՝ ասելով. «Հեռո՛ւ ինձանից, չարագո՛րծ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը...» [1, էջ 214]: Հայոց արքայի շուրջ հյուսված այս ավանդազրույցը, որտեղ վեր է խոյանում հայկական հողի կենարար՝ խորհրդանշական ուժը, ժողովրդական հայրենասիրության լավագույն օրինակներից է:

Ազգային արժեհամակարգի հիման վրա ձևավորված խորը գիտակցական ժողովրդական հայրենասիրության մյուս կարևոր օրինակներից է Եղիշեի Վարդանանց պատերազմին նվիրված պատմությունը և հատկապես դրա մեջ տեղ գտած Ծաղկոտն գավառի Անգղ ավանի դեպքերը: Հայաստան գալով՝ հայ նախարարները պարսից մոգերի և զորքի ուղեկցությամբ բանակում են Անգղ ավանում, որտեղ մոգերը փորձում են քանդել տեղի եկեղեցին, սակայն դա առաջացնում է տարբեր տեղերից ժամանած հայ բնակչության զայրույթը, ովքեր Ղևոնդ Երեցի գլխավորությամբ հարձակվում են մոգերի վրա և կանխում եկեղեցու ավերումը, իսկ սարսափած մոգերի առաջնորդն աղաչում էր իր օգնականներին. «...որ հնար գտնեն իրեն մահից փրկելու և ողջ-առողջ նորից արքունիք հասցնելու» [2, էջ 64]:

Վերը նշված հերոսները և պատմական հերոսական դրվագներն էլ հենց հանդիսանում են ժողովրդական հայրենասիրության վառ օրինակները: Այսպիսի ժողովրդական հայրենասիրության բուռն պոռթկումները հատուկ են աշխարհի բոլոր ժողովուրդներին[1]:

Այսպիսով՝ ցանկացած ժողովրդի համար, մշտապես և բոլոր հասարակարգերի պայմաններում ժողովրդական (ներքևից) հայրենասիրությունը՝ հիմնված խորը գիտակցական, ազգային արժեքային համակարգի վրա, եղել է գերակայող ցանկացած պետական, պաշտոնական հայրենասիրության նկատմամբ:

Ինչ վերաբերում է հետխորհրդային շրջանում ձևավորված հայրենասիրությանը, ապա հարկ է նշել, որ այն բա-

1 Ծնթ. Տարբեր ժողովուրդների պատմության այս կամ այն դրամատիկ իրողությունների շրջանում ժողովրդի միջից վեր են խոյացել ժողովրդական հերոսները, որոնք, իրենց կյանքը ներդնելով, պաշտպանել են ընդհանուրի շահը, ինչպես օրինակ Ժաննա դ՛Արկը ֆրանսիացիների համար, ով ժողովրդի կողմից ստացել էր «Օռլեանի կույս» անունը, Ռոբին Հուդը՝ Անգլիայում, ով օգնում էր աղքատներին և պաշտպանում նրանց հարստահարողներից, Վիլհելմ Տելը՝ Շվեյցարիայում, ով պայքարում էր Շվեյցարիայի անկախության համար և համարվում է Շվեցարական հայրենասիրության կենտրոնական կերպարներից:

վականին արտասովոր է և խիստ տարբերվում է դասական-խորհրդային և ռեֆորմատորական-վերակառուցողական հայրենասիրությունից: Մի կողմից վերջին 20 տարիների ընթացքում նրանում մեծանում էր «հայրենիքը սիրելու», և նվազում էր՝ «աշխատել հանուն երկրի բարօրության» բաղադրիչը: Մյուս կողմից էլ նվազում է նրանց թիվը, ովքեր մշտապես պատրաստ են սեփական երկրի մասին մերկ ճշմարտությունը ասել, ըմբոշխնելով սեփական բարոյական-քաղաքական պերճախոսությունը, և իրենց նվիրելով «երկրի վերափոխմանն ու վերաձևմանը», մոռանալով սեփական մասնագիտական, ընտանեկան և այլ կարևոր պարտականությունների մասին [8, էջ 55]:

Հայրենասիրությունը կարևորագույն արժեք է անձի արժեհամակարգի ձևավորման գործընթացում, որն ուղղված է նրա՝ որպես հասարակության անդամի, կենսագործունեությունն առավել արդյունավետ և գիտակցված դարձնելուն [5, էջ 74]: Սեփական ազգի նկատմամբ սիրո և նվիրվածության գիտակցումը ճանապարհ է հարթում նաև համամարդկային արժեքներին հաղորդակցվելու և դրանց դերը մարդկության կյանքում բացահայտելու գործում [5, էջ 74]:

Հայոց պատմության դասավանդման գլխավոր նպատակներից է՝ ամրապնդել սովորողի հարգանքն ու հպարտությունը հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ [3, էջ 8]: Այսօր Հայոց պատմության դասընթացի շրջանակներում ավագ դպրոցականի մեջ հարկ է ձևավորել հայրենասիրություն, հայրենիքին ծառայելու և նրա պաշտպանության գործին նվիրվածություն, ազգային պետական մտածողություն, ազգային ինքնագիտակցություն [3, էջ 33]:

Համաշխարհային հանրության մեջ համահարթեցման աճող դրսևորումները ավելի են բևեռում ուշադրությունը ազգային մշակույթների զարգացման վրա, որն էլ հնարավորություն է տալիս խոսելու բոլոր տեսակի մշակույթներն օրգանապես իրար կապող բազմամշակութային կրթության տեսլականից [9, էջ 379–380]:

Իրական հայրենասերը սիրում է իր հայրենիքը, հպարտանում նրանով՝ աչք չփակելով նրա խնդիրների վրա, փորձելով լուծել դրանք: Հայրենասիրության դրսևորումը, մեր կարծիքով, ոչ միայն աշխատելն է երկրի բարօրության համար, սիրելն ու հպարտանալը նրանով, այլ հարգանքը հայրենական ավանդույթների հանդեպ, սեփական ընտանիքների ամրացումը և մատաղ սերնդի դաստիարակությունը՝ ազգային մշակույթի, մայրենի լեզվի, ավանդույթների և սովորույթների, բազմադարյա քրիստոնեական արժեքների՝ պահպանելը, զարգացնելը և դրանց սերնդեսերունդ փոխանցելիության ապահովումը:

Այսպիսով՝ հայրենասիրությունը պետք է լինի խորը-արժեքային, գիտակցական, որը պետք է հենվի հետևյալ չափանիշների վրա՝

1. հարգանք, հպարտություն, ակնածանք պետականության սիմվոլների, հայրենիքի, պատմական անցյալի, սեփական ժողովրդի ազգային մշակույթի նկատմամբ.
2. պատրաստակամություն զին. ծառայության և հանուն հայրենիքի ինքնազոհության (ռազմահայրենասիրական ուղղություն).
3. սեփական ժողովրդի պատմության և մշակույթի մասին գիտելիքների իմացություն, հարգանք նախնիների և նրանց ձեռքբերումների նկատմամբ.
4. հոգատարություն շրջակա միջավայրի և բնության պահպանություն.
5. հայրենիքի բարօրությանն ուղղված գործունեություն՝ մասնագիտական, հասարակական, կամավորական, բարեգործական, ստեղծագործական և այլն.
6. բարի վերաբերմունք և կամեցողություն շրջապատի մարդկանց և մեր-

ձավորների նկատմամբ հոգատարություն.

7. կառուցողական քննադատություն թերությունների վերաբերյալ.

8. հայրենիքի նկատմամբ սիրո վրա հիմնված աշխարհայացք և արժեքային համակարգ:

Այսպիսով՝ հայրենասիրությունը մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց մշտապես և բոլոր հասարակարգերում, քաղակրթության զարգացման բոլոր շրջափուլերում ունեցել է և ունի կարևորագույն տեղ անձի ձևավորման, նրա՝ որպես հասարակական անհատի, քաղաքացու կայացման գործընթացում: Հայրենասիրությունը իր ուրույն տեղն ու դերն ունի անձի արժեքային համակարգում, և դարեր ի վեր, սերնդեսերունդ հասարակական պահանջ է հանդիսացել դրա սերմանման ձևերի, մեթոդների և մոտեցումների մշակումը, հղկումը և փոխանցումը:

Այս համատեքստում կարևորագույն նշանակություն է ստանում հայոց պատմության դասավանդման ընթացքում հայրենասիրական դաստիարակության վերոնշյալ խնդիրների իրականացումը:

Այսինքն՝ հայրենասիրական դաստիարակությունն իրականացնելիս պետք է հաշվի առնվի ոչ միայն ռազմա-հայրենասիրական ուղղվածությունը, այլ նաև անձի՝ որպես հայրենասեր քաղաքացու, հայրենիքի առջև ծագած՝ հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային խնդիրներին հաղորդակից և դրանց լուծման ուղիներ փնտրող, հասարակական անտարբերության և անարդարության հանդեպ անհանդուրժողականություն դրսևորող քաղաքացու ձևավորման ուղղվածությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փ. Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, "Հայաստան", Երևան, 1968, էջ 214:
2. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, "Հայաստան", Երևան, 1971, էջ 64:
3. Հայոց պատմություն, հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր, ՀՀ կրթության և գիտության նախարարություն կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2009, էջ 8:
4. Հ. Ղևոնդյան, Պատմության դասավանդման մեթոդիկա, "Մանկավարժ", Երևան, 2001, էջ 163:
5. Ա. Մելքոնյան, 1960-ական թվականների ազգային զարթոնքը և խորհրդահայ պատմագիտությունը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր, նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Երևան, 2015, էջ 68:
6. Լևոն Շանթ, երկեր, Ընկերաբանական ու գրաբանական հարցեր, հատոր Ե., Պեյրութ 2008, էջ 11:
7. Սասունցի Դավիթ, հայկական ժողովրդական էպոս, երկրորդ հրատարակություն, նախաբանը՝ ակադեմիկոս Հ. Օրբելու, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 4:
8. Иоффе А.Н., Патриотизм и его примеры в истории России, Преподавание истории в школе, 2012, N. 5, ст. 52.
9. Кукушин В.С. Болдырева-Вараксина А.В., Педагогика начального образования, педагогическое образование, «Март», Москва, 2003, с. 379-380.
10. Методика обучения истории в средней школе, пособие для учителей, под ред. Ф.П. Коровкина, в двух частях. Ч. первая, Москва, «Просвещение», 1978, с. 249.
11. Словарь-справочник по педагогике, автор состовитель Мижериков В.А., под. ред. Пидкасистого П.И., "Творческий центр", Москва, 2004, с. 264.
12. Степанищев А.Т. Методика преподавания и изучения истории, учебное пособие для вузов, ч. 1, Владос, Москва, 2002, с. 92.
13. Шемякинский В.М. Две трактовки патриотизма Педагогическое образование и наука Научно-методический журнал, педагогическое образование и наука, международная академия наук педагогического образования, N. 3, 2015, с. 130.

THE PROBLEMS OF PATRIOTIC UPBRINGING IN THE CONTEXT OF THE TEACHING HISTORY OF ARMENIAN CULTURE (IN HIGH SCHOOL)

ARSHAK MELKONYAN

Researcher of the Chair of World History and its Teaching Methodology, Faculty of History and Jurisprudence, ASPU

In this article, we discuss the current problems of patriotic upbringing in the context of the teaching history of Armenian culture. Analyzing the historical path of development and different manifestations of the concept of patriotism, in public spheres we propose a broader scope of patriotism and patriotic education, and not only the perception of the military-patriotic direction. In particular, the manifestations associated with providing for the family, work, healthy generation, awareness of their rights and responsibilities, serving the motherland and the people with honest and selfless work, respect and concern for the representatives of different social groups, children and the elderly, a manifestation of non-discriminatory attitudes and condescending behaviour towards people with disabilities.

ПРОБЛЕМЫ ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В КОНТЕКСТЕ ПРЕПОДАВАНИЯ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ (В СТАРШЕЙ ШКОЛЕ)

АРШАК МЕЛКОНЯН

Факультет истории и правоведения АГПУ им. Хачатура Абовяна, аспирант кафедры Всемирной истории и методики ее преподавания

В статье обсуждаются текущие проблемы патриотического воспитания в контексте преподавания истории армянской культуры. Анализируя исторический путь развития и различные проявления патриотизма, в общественных сферах предлагается более широкий охват патриотизма и патриотического воспитания, чем военно-патриотическое направление. В частности, рассматриваются проблемы, связанные с обеспечением семьи, работы, здорового поколения, осознанием гражданами своих прав и обязанностей, служением родине и народу честной и самоотверженной работой, уважением и заботой о представителях различных социальных слоев, детях и пожилых людях, проявлением толерантного отношения и снисходительного поведения к людям с ограниченными возможностями.